№ 88 ՈՒՐԲԱԹ, 29 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 29 ԱՊՐԻԼԻ № 88

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Մայիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 7 րուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Պետերբուրգում ապրիլի 19-ին վախճանված

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

ՈՐԴԻՆԵՐԸ և ԱՂՋԻԿՆԵՐԸ յայտնում են, որ իրանց թանգագին հօր մարմնի յուղարկաւորութիւնը տեղի կունենայ շաբաթ, ապրիլի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին հանգուցեալի բնակարանից (Պասկևիչյա փող.) դէպի Վանքի մայր եկեղեցին:

Թաղումը նոյն օրը՝ Վանքի բակում:

Ամբիծքը տեղի կունենայ ուրբաթ, ապրիլի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին, հանգուցեալի բնակարանում: 432. 3—2

«Ա. Ի. ՄԱՆԹԱՇԵՎ ԵՒ ԿՈՄՊ.» ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այսօր, ուրբաթ, ապրիլի 29-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Ընկերութեան Վարչութեան շինութեան մէջ կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ: 442. 1—1

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ և ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԸ յայտնում են, որ

ԴՊՐՈՑԻ ՊԱՏՈՒԱՒՈՐ ՎԵՐԱՀՍԿԻՉ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մարմնի յուղարկաւորութիւնը բնակարանից (Պասկևիչյա փող.) տեղի կունենայ վաղը, շաբաթ, ապրիլի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին դէպի Վանքի մայր-եկեղեցին: Թաղումը նոյն օրը՝ Վանքի բակում: 436. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՒԱԳ
ԱՐ. Ն. ՄԻԼԵԱՆԸ
խնդրում է Թիֆլիսի պ. պ. վաճառականներին ներկայ լինել

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մարմնի յուղարկաւորութեանը բնակարանից (Պասկևիչյա փող.) վաղը, շաբաթ, ապրիլի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին: Թաղումը նոյն օրը՝ Վանքի բակում: 435. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ
սրանով յայտարարում է, որ վաղը, շաբաթ, ապրիլի 30-ին

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

Թաղման պատճառով Բանկը փակ կը լինի մինչև ցերեկվայ ժամը 12-ը: 440. 2—1

ՑԻՐԿ-ՍՊՈՐՏ Այսօր, ուրբաթ, ապրիլի 29-ին կը կայանայ ՄՐՑԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ, բաղկացած 3 բաժանմունքից: Դեբիւտ նոր արտիստների: Շարունակութիւն ֆրանսիական միջազգային ԸՄԲՇԱՄԱՐՏԻ— ղեկավարութեամբ Լեբեդևի:

Այսօր կըմբշամարտեն 4 հետաքրքրական զոյգեր:
Վճռական մենամարտ ՎԱԽՏՈՒՐՈՎԻ և ԲՈՒԼԼԻ միջև:
Մօտ օրերս կը կայանայ ՔԵՌԻ-ՎԱՆԻԱՅԻ բենեֆիսը:
առ. 434. 1—1

„Ա. Ի. ՄԱՆԹԱՇԵՎ եւ Կոմպ." Ընկեր. Բալախանիի նաւթահանքերի քրիստոնեայ եւ մահմեդական ծառայողներն ու բանւորները

յայտնում են բոլոր նրանց, որոնք կը կամենան յարգել Պետերբուրգում ապրիլի 19-ին վախճանված իրանց անմոռանալի տիրոջ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

յիշատակը՝ թաղման հանդիսին ներկայ լինելով, որ մարմնի յուղարկաւորութիւնը տեղի կունենայ վաղը, շաբաթ, ապրիլի 30-ին հանգուցեալի բնակարանից (Պասկևիչյա փող.) առաւ. ժ. 11-ին դէպի Վանքի մայր-եկեղեցին: Ամբիծքն այսօր, ուրբաթ, ապրիլի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի բնակարանում: 441. 1—1

ՉԵՂԱԾ ՆՈՐՈՅԹ ԿՈՎԿԱՍՈՒՄ
Թիֆլիսում ԲԱՑՎՈՒՄ Է
ԷԼԵԿՏՐՕ-ԱՒՏՕՄԱՏԻԿ ԿԱՖԷ-ՃԱՇԱՐԱՆ
Բացման օրվայ և տեղի մասին
կը յայտարարվի առանձին:
առ. 537. 1—1

ԸՆԴԱՐՁԱԿԵՆՔ ՀՈՂԱՅԻՆ ՖՕՆԴԸ

Երկու տարի առաջ, երբ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը սկսեց գործել նոր կանոնադրութեամբ, առաջին իր նիւթերը նուիրեց ջրի մատակարարութեան հարցին:

Եւ այնուհետև էլ մի քանի անգամ այդ հարցը շօշափվեց Ընկերութեան նիւթերում և յարուցեց ջերմ հետաքրքրութիւն և վիճաբանութիւն:

Դա բնական էր և հասկանալի:

Դա խոշոր և էական հարց էր մեր երկրի և ժողովրդի համար:

Թէ իբրև ընդհանուր մի խնդիր և թէ մասնաւորապէս վերաբերեալ Էջմիածնին՝ այդ խնդրի առիթով կարդացվեցին զեկուցումներ՝ Ա. Քալանթարի, Գ. Կիրակոսեանի, Կ. Մելիք-Շահնազարեանի, Գ. Մուրադեանի, Գ. Աղաբաբեանի և քննութեան առնվեցին նաև ուրիշ մասնագէտների աշխատութիւնները, վերաբերեալ նոյն խնդրին:

Այդ խնդիրը այնքան կարևոր է, որ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը որոշել է իր ամառային դասընթացքներում յատկացնել ջրի մատակարարութեան խնդրի ուսումնասիրութեան համար մի շարք դասախօսութիւններ և զրոյցներ:

Այդ խնդիրը նեղ մասնագիտական մի խնդիր չէ, որ նրա մասին խօսակցութիւնները մենք թողնենք միայն և միայն մասնագէտ անձերին:

Ոչ: Նրա մէջ պարփակված է բացի մասնագիտականից շատ խոշոր ընդհանուր տնտեսական խնդիր:

Դա մեր երկրի արգաւանդ հողերի բարելաւման և ընդարձակման խնդիրն է:

Մենք գանգատվում ենք հողի պակասութեան վրա, մեր գիւղացին սակաւահողութեան պատճառով թողնում է տուն ու տեղ և հեռաւոր ծայրեր չափչփում, մինչդեռ եթէ կարող լինէինք ոռոգման ենթարկել մեր անջրդի տեղերը, մենք կը ստեղծէինք նոր հողային ֆօնդ մեր գիւղացիութեան համար և կարող կը լինէինք մեր երկրի ընդարձակ դաշտավայրերում և անապատներում զետեղել հարիւր հազարաւոր մարդկանց:

Վերցրէք Կուրի և Արաքսի աւազաններում գտնվող հողերը, որոնք ներկայումս ծառայում են միայն իբրև արօտներ, իբրև խաշնարածների ձմերոցներ, շատ քիչ արդիւնք բերելով միլիօնաւոր դեսեատին տարածութիւններից:

Անշուշտ՝ մի անգամից ոռոգել բոլոր անապատները և անջրդի սարաւանդները անկարելի է, իսկ մի քանիսը գուցէ անհնարին և ապագայում, բայց աներկբայելի և անկասկած է, որ այդ հողերի մի նշանաւոր մասը բոլորովին յարմար է ջրաբեր արգաւանդ անդաստան դառնալու թէ ստորերկրեայ ջրամբարների շահագործութեան և թէ հոսող գետերի ճիւղաւորութեան շնորհիւ:

Կարևոր է նկատել, որ անջրդի հողերի ընդարձակ տարածութիւններ իրանց սակաւարդիւնաւէտութեան պատճառով բեռ են հանդիսանում իրանց տէրերի համար, ուստի տրամադրելի են վաճառքի համար: Եւ կարող են ձեռք բերվել ներկայումս էժան գներով:

Արդ, եթէ պետութիւնը, կամ մի որևէ կուլտուրական հիմնարկութիւն, կամ վերջապէս մի ընկերակցութիւն ասպարէզ գար դիւրացնելու այդ հողերի գնելը, նրանց ոռոգելը և հողապահանջ գիւղացիութեան յանձնելը, դա կը լինէր այն վերին աստիճանի գեղեցիկ և համակրելի գործերից մէկը, որը կարելի էր մտածել մեր գիւղի բարգաւաճման համար:

Գիւղացիները իրանց նախաձեռնութեամբ չեն կազմակերպվում և ընկերակցական կապերով չեն միանում հանրային և հաւաքական ձեռնարկութիւններ գլուխ բերելու համար:

Նրանց պէտք է օգնել: Իսկ երբ առաջին մի քանի փորձերը աջող կը լինեն և արդիւնքը ակներև, այն ժամանակ շատ շատերը կընտելանան նոր ձեռնարկութիւնների կազմակերպութեան և իրանք հանդէս կը գան ասպարէզում:

Եւ ահա մեր հասարակութեան բանիմաց մարդիկ պէտք է մտահոգ լինեն յարուցված խնդրի դրական լուծման մասին: Յետոյ, շատ յետոյ, կարող է արդէն ուշ լինել և յարմար առիթները բաց թողնված կը լինեն:

Ս. Քալանթար

ԱԼ. ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը ապրիլի 26-ին առաջադրութեամբ յայտնում է Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսին ի գիտութիւն և ի պատշաճ կարգադրութիւն, որ հանգուցեալ Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեանի յուղարկաւորութեան և թաղման ժամանակ իր և Էջմիածնի միաբանութեան կողմից ներկայացուցիչ է կարգում Յուսիկ արքեպիսկոպոսին, որը թաղման օրը պատարագ պէտք է մատուցանի ի յիշատակ հանգուցեալի: Յուսիկ արքեպիսկոպոսը ապրիլի 27-ին հասնելով Թիֆլիս, կէսօրից յետոյ ժամը 4-ին, Եփրեմ եպիսկոպոսի և Գալուստ քահ. Աբուլեանի ուղեկցութեամբ, գնաց հանգուցեալ Մանթաշեանի տունը, ուր հանգուցեալի որդի Լեւոն Մանթաշեանին յայտնեց տեղակալի և միաբանութեան ցաւակցութիւնը, յանձնեց տեղակալի վշտակցութեան և մխիթարական թուղթը:

◆ Հանգուցեալի դագաղի վրա առաջին պաշտօնական հոգեհանգիստը բնակարանում կը լինի այսօր, երեկոյեան ժամը 7-ին:

◆ Նաւթլուղի հայոց եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը որոշել է հոգեհանգիստ կատարել հանգուցեալ Ալ. Մանթաշեանի յիշատակին այսօր, ամսիս 29-ին, և ամբողջ կազմով ներկայ լինել թաղման սգահանդիսին:

◆ Ստացանք հետևեալ հեռագիրները.

Շուշի, 28 ապրիլի.—Խնդրում ենք Բենիկ վարդապետին լինել ներկայացուցիչ Մանթաշեանի թաղման ժամանակ և արտայայտել ցաւակցութիւն ծանր կորստի առիթով:

Մեղրեցոց եկեղեցու երէցփոխ՝ Արշակ Մանդասարեան, Վերին-Թաղի եկեղեցու երէցփոխ՝ Եփրեմ Այդինեան, Ագուլեաց եկեղեցու երէցփոխ՝ Միքայէլ Եղիազարեան և Ղազանչեցոց եկեղեցու երէցփոխ՝ Յովհաննէս Դաւթեան:

Զաքաթալա, 24 ապրիլի.—Հայ ազգի և եկեղեցու մեծ բարերար և բարեգործ՝ իսկական պետական խորհրդական Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեանի անսպասելի մահվան պատճառով ազդված՝ խնդրում ենք բժիշկ Յարութիւնեանցին լինել թաղմանը ներկայացուցիչ Զաքաթալայի հայ հասարակութեան և հայոց դպրոցի հոգաբարձական և ուսուցչական կազմերի կողմից, արտայայտել հանգուցեալ Մանթաշեանի որբացած ընտանիքին մեր խորին վշտի ցաւակցութեան զգացումները: Հանգիստ աճիւնիդ, ժողովրդի և հայրենիքի բարեկեցութեան համար բարի գործերով քեզ անմահացնող մեծ մարդ: Հոգաբարձութեան, ուսուցչութեան և հասարակութեան կողմից՝ Բէկ-Յովսէփեան:

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ

VII *)

Մենք տուինք ընդհանուր տեղեկութիւններ Ա. Մանթաշեանի գործունէութեան և բարեգործութիւնների մասին, յիշատակելով միայն աչքի ընկնող գծերը:

Իբրև խոշոր առևտրական ընդունակութիւն ունեցող մի անձ, նա կարողացաւ աւանդական վաճառականութեանը տալ նոր աւելի ընդարձակ ծաւալ և արտայայտութիւն:

Հասարակական գործունէութեան մէջ նա աւելի հետևում էր աւանդական ազգային ուղղութեան: Նուիրատուութիւնների մեծագոյն մասը յատկացվել են հայ եկեղեցուն և հայ կրթական գործերին վերաբերեալ հիմնարկութիւններին, այլ և ուսում առնող երիտասարդութեան, իսկ միւս մասը այնպիսի ընդհանուր հիմնարկութիւնների, ինչպէս են առևտրական դպրոցը, անչափահաս յանցաւորների ապաստարանը և այլն:

Մանթաշեանը զանազան ժամանակներ օգնութեան է հասել նաև գրական գործունէութեամբ պարապվողներին և հրատարակութիւններին: Արտասահմանում գտնվող հայ գրականագէտները աւելի մեծ չափով օգտվել են Մանթաշեանի նպաստներից: Եւ հասկանալի է, թէ ինչու: Որովհետև արտասահմանում գտնվող հայ գործողները և գրականագէտները, լինելով դուրս հայկական շրջավայրից, աւելի կղզիացած վիճակի մէջ են եղել, քան Կ. Պօլսում և Կովկասում գտնվողները:

Մենք չենք յիշատակի Մանթաշեանի ուրիշ նուիրատուութիւնները, որոնք արված

---

*) Տես «Մշակ» № 87.

են փոքր չափով զանազան հիմնարկութիւնների և գործողների:

Մանթաշեանը մեռաւ չիրագործած իր բոլոր ծրագիրները:

Հայ հասարակութեան շրջաններում լըսվում է ընդհանուր ցաւ, որ հանգուցեալը գերեզման իջաւ չը հասած իր բոլոր իղձերին:

Նա դեռ այնքան ծեր չէր, միայն 69 տարեկան: Բայց հիւանդութիւնը, որ բուն էր դրել նրա ընդհանրապէս առողջ կազմուածքի մէջ, յաղթահարեց նրան և ժամանակից առաջ դագաղ իջեցրեց:

Մանթաշեանի գործունէութիւնը կապված է ժամանակակից անձերի և եղելութիւնների հետ, ուստի նրա դէմքը կարող է ամբողջացված երևան գալ, երբ կենսագրութեան համար պարզված կը լինեն բոլոր հանգամանքները:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Լրագիրներից)

Պետերբուրգ. — Արտաքին գործերի մինիստրութեանը կից շրջաններում խօսում են, որ պէտք է խոշոր դէպքերի սպասել Հեռաւոր Արևելքում զինուորական մինիստր Սուխոմլինովի վերադառնալուց յետոյ:

Ըստ երևոյթին, խօսքը վերաբերում է Կուլջին ռուսական զօրքերով գրաւելու հարցին, որովհետև Պեկինի կաբինէտը չը կատարեց իր տուած խոստումները:

Կուլջին գրաւելու հարցը կը հանդիսանայ, համաձայն լուրերի, միջվարչական մի շարք խորհրդակցութիւնների առարկայ Ստոլիպինի նախագահութեամբ: Վերջնական վճիռը, սակայն, կորոշվի միայն զինուորական մինիստրի վերադարձից յետոյ:

Տեղեակ շրջաններում հաւատացնում են, որ Կուլջին գրաւելու հարցի լուծման դէպքում, այլևս բանակցութիւններ չեն վարվի Պեկինի կաբինէտի հետ այն մասին, թէ ինչու չէ կատարում կաբինէտը իր խոստումները: Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը կը բաւականանայ սոսկ նօտա ուղարկելով, որի մէջ յիշատակված կը լինի, թէ կարող է պատահել, որ ռեպրեսիաների կը ձեռնարկվի:

Պէտք է շեշտել այն հանգամանքը, որ Պետերբուրգում դեռ ևս յոյս ունեն, թէ չինական կառավարութիւնը կը զիջէ գոնէ զինուորական մինիստրի Հեռաւոր Արևելք մեկնելու ազդեցութիւնից:

—

Պետերբուրգ. — Բարձր հեղինակաւոր աղբիւրից «Р. Сл.»-ի թղթակցին հաղորդում են, որ ներկայումս Սազօնովի հրաժարականի հարցը այլևս չէ յարուցվում:

Դիպլոմատիական շրջաններում եղած տեղեկութիւնների համաձայն, արտաքին գործերի մինիստրը իր առողջութիւնը շուտով վերականգնելու համար արագ մեկնելու է երկար արձակուրդով արտասահման: Սեպտեմբերին վերադառնալուց յետոյ, մինիստրը վերստին կը ստանձնէ իր պարտականութիւնները:

Սազօնովի մեկնումին հետևելու է վաւերացումն ռուս-գերմանական համաձայնութեան պայմանագրի:

—

Ապրիլի 24-ին Պետերբուրգից Հեռաւոր Արևելք մեկնեց ինժեներական մասի գլխաւոր տեսուչ Ս. Վերնանդերը: Նրա ճանապարհորդութեանը տըրվում է մեծ նշանակութիւն, այն պատճառով, որ Հեռաւոր Արևելքում մնում են մի շարք կարևոր, բայց չը լուծված խնդիրներ: Վլադիվոստոկում նրա մասնակցութեամբ տեղի են ունենալու մի շարք խորհրդակցութիւններ զինուորական մինիստրի նախագահութեամբ: Վերնանդերը կը վերադառնայ զինուորական մինիստրի հետ միասին:

—

Պարիզ.—Նիւ-Եօրկից հեռագրում են. «Ամերիկական մամուլը ոգևորութեամբ հետաքրքրվում է գերմանական կրօնպրինցի Ռուսաստան այցելութեամբ: Լրագիրները հաղորդում են բազմաթիւ սենսացիօն լուրեր:

«Այսպէս, օրինակ, «The Sun» հաւատացնում է, որ կրօնպրինցը յանձնելու է Վիլհէլմ կայսրի սեփական ձեռքով գրված նամակը, որի մէջ ընդգծված է, թէ Ֆրանսիան համաձայնութիւն է կնքել Անգլիայի հետ, չը նայած դաշնակցութեան գոյութեան, և որ Ռուսաստանը և Գերմանիան կարող են ձևակերպել իրանց յարաբերութիւնները առանձին հարցերի վերաբերութեամբ:

«The World», ամերիկական «դեղին» մամուլի խոշոր օրգանը, պնդում է, որ կրօնպրինցի ճանապարհորդութիւնը աւելի ևս կը գրգռէ աշխարհին, քան պոտսդամեան տեսակցութիւնը»:

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 ապրիլի

Պետերբուրգ. — Արդարադատութեան մինիստրութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ հանքային Ջրերի մօտերը սպանված Բուշերօն հօր և որդու գործը աւարտված է: Ցանցագործ չորս տեղացիները ձերբակալված են, բոլոր յափշտակված իրերը—200,000 րուբլու—յետ են խլված: Գործը յանձնվում է զինուորական դատախազին:

Փակվեց միջազգային օդագնացութեան ցուցահանդէսը:

—

Բրիւսել.—Ծաշին Ֆալիէրը և Թագաւորը փոխանակեցին սրտագին բաժակաճառեր և ընդգծեցին, որ ընդհանուր ձգտում կայ սերտ կերպով համակերպելու երկու երկիրների տնտեսական շահերը:

—

Տանժէր.—Մագալան գաղտնի կերպով դուրս եկաւ Ֆէցից, ջարդեց խռովարկուներին, գրաւեց Նաջալա-Ֆարաջի ամրոցը 1000 կաբիլներ յարձակվեցին գեներալ Մուանիէի բանակի վրա, բայց սոսկալի ջարդի հանդիպեցին:

—

Մարսէյլ.—Կազաբլանկ մեկնեց «Վենլօնգ» նաւը 55 օֆիցերներով և զինուորներով:

—

Նիւ-Եօրկ.—Ատլանտեան նաւատորմի երկրորդ գումարտակը փոխ-ծովակալ Բեջերի հրամանատարութեամբ մեկնեց Բալտիկ ծովը:

—

Էդինբուրգ.— Էմպայր-Պալաս թատրօնը ներկայացումից յետոյ այրվեց: Մարդկային զոհեր չը կան:

—

Պէկին.—Սահմանադրական պալատի նստաշրջանը բացվելու է հոկտ. 9-ին:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 ապրիլի

Սան-Դիէգօ (Տեխաս). — Ապստամբները գրաւեցին սահմանակից Տիաջիանա քաղաքը և մի մասը հրդեհեցին: Ապստամբների պարագլուխ Մադէրօն չափազանց վշտացած է կռիւը խափանելու անաջող փորձից: Վաշինգտօնում կարծում են, որ Մադէրօն կորցրել է իր իշխանութիւնը ապստամբների անկազմակերպված ուժերի վրա, որպիսի հանգամանքը անհանգստութիւն է յարուցում:

—

Մէկսիկա.—Ապստամբներն այրեցին Խուարէցը: Կրակը ուժեղ քամու պատճառով արագօրէն տարածվում է:

—

Էլպազօ.—Խուարէցի մօտերը կռիւը վերսկսվեց: Ապստամբները ռումբեր են նետում Էլպազօյի վրա: Շինութիւնների տանիքները լի են դիտողներով:

—

Լարէդօ (Տեխաս).—Դէլօրօյի մօտերը տեղի ունեցաւ ճակատամարտ: Դաշնակից զօրքերը կորցրին 50 մարդ:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 16/29 ապրիլ

«Մ. և Ց.» կուսակցութիւնը, օսմ. խորհրդարանին մեծամասնութեան կուսակցութիւնը, պառակտուած է գէշ կերպով:

Համաձայնութիւնը, որ իբր թէ գոյացաւ այս պառակտումէն յետոյ, բնաւ իրական չէ, այլ խաբուսիկ հանգամանք ունի և միայն ժամանակ շահելու համար ստեղծուած է:

Հետևաբար անոր հաւատ ընծայել կարելի չէ:

Տագնապը կայ ու կը մնայ, և իր առաջին արդիւնքը կը կարծուի թէ ըլլայ մինիստրական տագնապ մը, որուն այսօր վաղը կը սպասուի:

«Մ. և Ց.» կուսակցութեան պատկանող մինիստրներու անկումը մասնաւորապէս անխուսափելի է և անվրիպելի, զի բուն տագնապին շարժառիթը անոնք են, իրենց քանի մը համախոհներով, որոնք կը ներկայացնեն կօմիտէի վարիչ ուժերը: Այդ վարիչները, վստահ՝ իրենց հետևորդ ոչխարներու կոյր հետևողականութեան, իւրացուցին գլխաւոր ու շահաբեր պաշտօնները:

Այսպէս՝ Թալէաթ բէյ, երբեմն հեռագրատան 4—5 հարիւր ղրուշնոց պաշտօնատար, ներքին գործոց մինիստր դարձաւ և երկար ատեն վարեց այդ պաշտօնը: Ջաւիդ բէյ, երբեմն ողորմելի դասատու մը, այսօր ֆինանսներու մինիստր, չէ թէ միայն նախանձ կը շարժէ իր պաշտօնով, այլ կասկած կուտայ, թէ իր դիրքը կը շահագործէ, համիդեան շրջանի մինիստրներուն պէս, փոխառութիւններէն իրեն համար միջնորդ չէք մը ապահովելով: Իր հակառակորդները իրենց այս ամբաստանութեան իբր փաստ կը հաւաստեն, թէ երբեմնի կարօտ ուսուցիչը ոչ թէ միայն ճոխ կեանք մը կը վարէ հիմա, այլ խոշոր հարստութիւն մը կը դիզէ, արտասահման, մասնաւորապէս Ռումանիա (Դոմրուջա), ընդարձակ տարածութեամբ հողեր գնելով:

Իր դէմ դժգոհութիւնները մասնաւորապէս այն ատեն աւելի շեշտուեցան, երբ, հակառակ բոլոր օսմանցիներու փափագին և խորհրդարանին ամենաստուար մեծամասնութեան կամքին, Ջաւիդ բէյ մտաւ ցոյց տուաւ ծխախոտի մենաշնորհը վերանորոգելու: Այս գործով շահագրգռուողներ կը ակնյեն թէ, մենաշնորհէն՝ երկրին բնակչութեան կրած վնասներէն զատ՝ պետութիւնը կը կորսնցնէ տարեկան 5 միլիօն ոսկի, որ ապահովուած է եթէ մենաշնորհի դրութիւնը ջնջուի: Եւ ասոնք ծխախոտի վաճառականներէ և ուրիշ մասնագէտներէ բաղկացած յանձնաժողովի մը մէջ, որուն նախագահած էր Ջաւիդ բէյ, շատ որոշ կերպով պարզուած էին, և ինքն ալ համամիտ գտնուած էր անոնց եզրակացութեան:

Հիմա ինչ եղաւ, որ ճիշդ երկրին շահերուն և իր համոզումներուն հակառակ մենաշնորհին ի նպաստ առաջարկ կը բերէ: Եւ հոտառութիւնը կռնենան... մեծագումար կաշառքի: Այս խնդիրը՝ կուսակցութեան մէջ ծագած տագնապը փութացնելու մեծապէս նպաստած է, վասնզի երեսփոխանաց համար ասիկա «ըլլալու կամ չըլլալու» խնդիր մըն է: Մենաշնորհին ի նպաստ քուէ տուող երեսփոխանի մը համար վերընտրուելու հաւանականութիւն գրեթէ չկայ, զի ժողովուրդը շատ լեցուած է այս խնդրոյն համար: Նախանձի զգացումին հետ ուրեմն Ջաւիդ-բէյի դէմ եղած զայրոյթը է նաև գոյութեան խնդիր մը:

Նոյնպէս կուսակցութեան անդամներէն՝ Բաբան-զադէ Իսմայիլ Հակկը-բէյ, որ հիմա կրթական մինիստրի պաշտօն կը վարէ, երբեմն թիւրք լրագրաց ողորմելի լրաբերներէն մէկն էր, որ իբր շանտաժիստ ի նպաստ կամ ընդդէմ բաներ մը գրելու համար ասոր-անոր դէմ՝ շատեր կը յիշեն իրեն ձեռքը քանի մը մէջիտ դրած ըլլանին: Ամենախեղճ վիճակէ մը յանկարծ բարձրագոյն դիրքի կը բարձրանայ. և որովհետև տակաւին Արևելքի այս յետադէմ միջավայրին մէջ՝ ասոնք դիւրաւ չեն ըմբռնուիր, շատ նախանձողներ ունի:

Իթթիհադական միւս մինիստրներն ալ աւելի կամ նուազ զերծ չեն նախանձ գրգռող դիրք մը ունենալէ: Սակայն ասոնք, մէկ ատրիճան, տակաւին մարսելի էին և են դեռ, ուրիշ անմարսելի իրողութեան մը հետ, որ ծխախոտի ռէժիի խնդրոյն հետ տագնապին փութացման մէջ երկրորդ և գլխաւոր պատճառը եղաւ:

Ատիկա՝ Հիւսէին-Ջահիդ-բէյի պարագան է: Երբեմն 3—4 հարիւր ղրուշնոց դասատու մը, որ կէս կուշտ կէս անօթի իր կեանքը կը քաշքշէր Կ. Պոլսոյ մէջ, հիմա չէ թէ միայն Կ. Պոլսոյ երեսփոխան է և 50 ոսկի ամսական կառնէ, այլ և իբր «Թանինի» տէրը ու խմբագրապետը՝ կը շահագործէ իր դիրքն ու կօմիտէն: Ոչ թէ միայն իր դիրքէն պատկառելով բոլոր պետական պաշտօնատուները, միջազգային դրամական հաստատութիւնները և այլն՝ բաւական կլորիկ գումարներ, իբր subvention, կուտան «Թանին», այլ և կօմիտէին յայտարարութեամբ բոլոր իթթիհադականները և անոր ակումբները, ընթերցարանները և այլ հաստատութիւնները «Թանին» կը ստանան, որով իր թերթէն մեծ շահ մը կապահովէ:

Այնպէս որ՝ երբեմնի ծակ-գրպան դասատուն հիմա հազարաւոր ոսկիի տէր դարձած է և Կ. Պոլսոյ Թրամվայի իբր գլխաւոր բաժնետէրերէն մէկը՝ անոր վարչական խորհուրդին անդամ ընտրուած է:

Իբր թէ ասիկա բաւական եղած չըլլար, վերջերս անուանուեցաւ Հանրային Պարտուց վարչութեան օսմանցի բաժնետէրերու պատուիրակ: Պաշտօն մը, որ շուրջ 250 ոսկի ամսական շահ մը կապահովէ իրեն:

Ասիկա չափազանցութիւն մըն էր մանաւանդ, որ կը բռնաբարէր օրէնքը, որ կարգիլէր երեսփոխաններուն ուրիշ պաշտօն ունենալ:

Այս պարագան իրեն դէմ առաջ բերաւ հոսանք մը, և որովհետև Թալէաթ բէյ, Ջաւիդ բէյ և Ջահիդ բէյ եռրորդութիւն մը ճանչցուած են, իր դէմ պոռթկացող զայրոյթը տարածուեցաւ նաև միւսներուն դէմ և առաջ բերաւ ներկայ տագնապը:

Բողոքող իթթիհադականներու ներկայացուցած տասը յօդուածներէ բաղկացեալ պահանջումներուն վրայ աչք պտտցնել բաւական է՝ արդէն որոշ գաղափար մը տալու համար, թէ այդ երկպառակութիւնը ինչ բանէ ծագում առած է:

Մասնաւորապէս երեսփոխանաց մինիստր դառնալուն, ուրիշ պաշտօններ ստանձնելուն և մենաշնորհներու հետամտելուն դէմ տըրուած երեք արգելքները շատ ու շատ նշանակելի են, և բոլոր շարժման շարժառիթը ցոյց կուտան:

Իսկ սուլթանին սեղմեալ իրաւասութեանց բարձուիլը և դարձեալ իր նախկին իրաւունքներուն մէջ վերահաստատուիլը կը պահանջուի ոչ թէ ռէաքսիօներական միտումներով, այլ իշխանութիւնը խմբակի մը ձեռքը գործիք մը չդարձնելու և կայսրը—ինչպէս հիմա դարձած է—պարզ խամաճիկի մը չվերածելու համար: Մանաւանդ այդ իշխանութիւնը տալը անհրաժեշտ կը դառնայ, երբ խորհրդարանական դահլիճին տեղ կազմուի արտաքոյ խորհրդարանին դահլիճ մը, որ միայն արդի պարագաներուն մէջ ելից հնար մը կրնայ համարուիլ, զի ոչ ժողովուրդ ու ժողովական սահմանադրական ճշմարիտ ըմբռնում ու լայնամտութիւն ունի դեռ, և ոչ ալ մեր մինիստրները և մինիստրացուները սահմանադրական, հայրենասէր ու անձնուէր վարիչներու անշահախնդրութիւնը, և աւելի հակամիտ են կողոպտելու ու անձերնին միայն մտածելու:

Հետևաբար առաջարկուած տասը պայմաններուն ընդունուիլը խոհեմութիւն մըն էր, սակայն շատ տարակուսելի է, թէ ասով խնդիրը փակուած ըլլայ:

Դեռ գաւառները նոր արձագանգ պիտի գտնէ խնդիրը և նա ի՛նչ ընդունելութիւն գտնելը շատ տարակուսելի է: Ռումելիի զանազան կողմերուն մէջ, մանաւանդ իթթիհադական կեդրոններու մէջ, ինչպէս Սելանիկ, Մանաստըր և այլն, այս բողոքը հակասահմանադրական շարժում մը կը մեկնեն և սպառնական լեզու կը գործածեն բողոքողներուն դէմ իրենց թերթերուն մէջ:

Ասիկա երկիւղալի իրողութիւն մըն է, զի կրնայ շուտով խզել գոյացած համաձայնութիւնը և նոր փոթորիկներու պատճառ դառնալ:

Կ. Պոլսոյ մթնոլորտը յղի է և նոր դէպքերու ականատես պիտի ըլլանք հաւանօրէն:

Սպասենք: Շաւայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայոց Կենտր. Նպաստամատոյց Յանձնաժողովը, ապրիլի 21-ին կայացած իր նիստում, որոշել է տպագրութեան յանձնել Յանձնաժողովի բոլոր հաշիւները և նրա գործունէութեան տեղեկագիրը:

Յանձնաժողովը, դեռ անցեալ 1910 թ. յունիսի 10-ին փակելով իր գործունէութիւնը, կազմել էր իր բոլոր հաշիւները և վերստուգող յանձնաժողովի ստուգութիւնից յետոյ՝ ներկայացրել բոլոր հաշիւները մանրամասնօրէն հանգուցեալ Իզմիրլեան կաթողիկոսին, տեղեկացնելով մնացորդ գումարների քանակի և նրանց պահպանութեան մասին: Հանգուցեալ Հայրապետը նպատակայարմար էր գտել հաստատել տալ մի միայն Նպաստամատոյց Յանձնաժողով, որի կանոնադրութիւնը և մշակվել էր, սակայն Հայրապետի մահը վրա գալով՝ գործը մնաց անկատար: Այժմ Յանձնաժողովը որոշել է տպագրել ի տեղեկութիւն հասարակութեան և նուիրատուների տեղեկագիրը և հաշիւը, որից հասարակութիւնը կիմանայ, թէ ի՛նչ գործունէութիւն է ունեցել Յանձնաժողովը, ո՛րքան գումար է մնացել կանխիկ և ինչպէս է պահվում այդ գումարը:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Չորեքշաբթի, ապրիլի 27-ին, կայացաւ Կովկասեան Աշխարհագրական Ընկ. ընդհանուր ժողովը սենատոր Վատացիի նախագահութեամբ:

Աֆրիկայից Թիֆլիս եկած ծովային պաշտօնեայ Նիկիտին կարդաց մի համառօտ զեկուցում Կօնգօ երկրի մասին: Նկարագրեց աշխարհագրական դիրքը և բելգիացիների արած նուաճումները: Տեղեկութիւններ տուեց նեգրերի ցեղերի և նրանց արած կուլտուրական մի քանի առաջադիմութիւնների մասին:

Զեկուցումից յետոյ հանդիսականները տուին մի քանի հարցեր այնտեղի կլիմայի և տնտեսական հանգամանքների մասին:

Այնուհետև զեկուցում կարդաց ուսուցիչ Շուգուրով Թիֆլիսի շուրջը գտնվող օձերի մասին: Ուսուցիչն իր աշակերտներով յաճախ զբօսանքներ է անում Թիֆլիսի շրջակայքում: Վերջին կիրակի օրը նա բռնել էր 60 օձ: Ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ նրանցից ոչ մէկն էլ թունաւոր չէ: Շուգուրովը այն ընդհանուր կարծիքն էր յայտնում, որ օձերը օգտակար կենդանիներ են, մեծ մասամբ անվնաս, իսկ նրանց կոտորելով մենք աւելացնում ենք գիւղատնտեսութեան թշնամիների քանակը:

Զեկուցանողը ցոյց տուեց մի քանի տեսակ օձեր և աշխատեց փարատել այն երկիւղը, որ ունեն շատերը օձերի վերաբերմամբ:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՐԻՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Առաջարկութիւն Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. 30-ամեակի առիթով)

Թէև այդ միտքը իմ մէջ շատ վաղուց էր յղացած, բայց սրանից 4—5 տարի առաջ էր, որ յիշեալ Ընկ. իբր սոսկ հնագոյն անդամներից մէկը՝ դիմեցի տեղական խորհրդին մի յայտարարութեամբ՝ առաջարկելով հետևեալը. աչքի առաջ ունենալով Կովկասի կենտրոնում մայրաքաղաք Թիֆլիսի աշխարհագրական դիրքը, ամեն կողմից ունեցած ճանապարհների և այլ յարմարութիւնները, ինչպէս և Կ. Պոլսից յետոյ միակ բազմաթիւ հայ-բնակչութիւն*) ունենալը, Ընկերութիւնը իր վրա վերցնի՝ Կ. Պոլսի հայոց ս. Փրկչեան հիւանդանոցի նման մի ազգային հիւանդանոց ունենալու հիմնարկութեան նախաձեռնութիւնը:

Այդ մասին, բացի վերոյիշեալ պատճառաբանութիւնները, թւել էի նաև այն բարոյական և նիւթական մեծ բարիքները, որոնցով կարող էր օգտվել թէ ժողովուրդը և թէ Ընկերութիւնը, ինչպիսի են օրինակ՝ հանգուցեալների թաղման ժամանակ արված քելեխի և այլ շռայլ ծախսերի վատ սովորութեան արմատախիլ անելը և դրա փոխարէն՝ ժողովրդի մէջ արծարծել, ներշնչել ու սովորութիւն դարձնել բարեգործական այն հոգին, որ պսակների և այլ աւելորդ ծախքերի փոխարէն այդպիսի գումարները ժողովուրդը յատկացնի բարեգործական նպատակների և հաստատութիւնների, ինչպէս Կ. Պոլսում արդէն վաղուց գործադրվում է և որը այստեղ ևս տարածվելով՝ Ընկ. համար կը ծառայի որպէս մի մշտապէս հոսող նիւթական աղբիւր:

Աւելացրել էի նաև այն, որ Ընկ. այժմս միջոցներ չունենալով՝ կարող էր մին անգամ փակել իր ունեցած այնպիսի հա տատութիւնները՝ ինչպիսիք են որբանոց որի սաները արդէն վաղուց չափահաս դարձել և կարող են կեանքի մէջ մտնել, գո ծել զանազան պաշտօններում, աւելորդ գտն լով նրանց իշխանական հոգով կրթել ու ա լօնական մեզ համար աննպատակայարմ կեանքին վարժեցնել, ու այդպիսի կենցաղ վարութեամբ ու սովորութեամբ ապրեցնել Եւ այսպիսի նշանաւոր հաստատութ հիմնելու գործը աւելի հեշտ գլուխ բերել համար, առաջարկում էի, որ այլ և այլ հա տատութիւններին Ընկ. չօժանդակի, և ա նրանց հասարակութիւններին նպաստն տալով առժամանակ չը ջլատի իր նիւթ կան ույժերը: Մինչև անգամ այն ևս յի էի, որ եթէ այժմս անիրագործելի լինի առաջարկս, գոնէ 7—8 հոգուց բաղկացած յանձնաժողով հիմնվի «Ազգային հիւա դանոց հիմնելու յանձնաժողով» անու նով, որպէս զի տեղեկութիւններ հաւաք ուսումնասիրի և միջոցներ գտնի՝ այ պիսի զուտ մարդասիրական հաստատու թիւն հիմնելու:

Այս առաջարկս այն ժամանակ խորհր դը թէև ուշադրութեան առնելով ներ յացրեց ընդհանուր ժողովին և թէև ընդհ նուր ժողովն ևս առաջարկս օգտակար գ տաւ, բայց պատրուակ բռնելով իբր նի թական միջոց չունենալը՝ ոչ թէ միայ առաջարկութիւնս անհետևանք թողեց, նոյն իսկ մի 7—8 հոգուց բաղկացած գո հէնց թէկուզ անուանական մի մարմ ներկայացնելու համար յանձնաժողով ընտ րելու, որ ընդհանուր ժողովում ևս բաւա կերպով նաև պաշտպանեցի ու պնդեցի, նուշադրութեան մատնվեց:

Ընկերութիւնը ոչինչ չէր կորցնի և բա ցի օգուտից ոչինչ վնաս չէր ունենայ որովհետև այդ յանձնաժողովը ոչ թէ միայն շատ բարեգործ անձանց հա մար որպէս մի ուղեցոյց և խորհրդա տու մարմին կը հանդիսանար կամ մի ջոցներ կը գտնէր, այլ և նրա կոչին արձա գանք կը տային շատ կտակ անող անձինք ինչպէս վերջին 2—3 տարվայ ընթացքում մօտ միլիօն րուբլիներ կտակ անողները, օրին նակ՝ հէնց Հաշտարխանում Թամազեանը որը արդէն մի հիւանդանոց ունէր հիմնած երկրորդի համար ևս որոշ գումար է կտա կել ու յատկացրել: Բացի դրանից հէնց այս օրերս վախճանված Պավլ Շաղինեանը այնպիսի հաստատութիւնների է կտակել 75,000 րուբլի, որ եթէ գոյութիւն ունե նար յիշեալ յանձնաժողովը և հարկաւոր կոչերով դիմած լինէր հայ բարեգործներին ես համոզված եմ, որ մի որոշ գումար ևս ոչ թէ նա, այլ նաև շատերը կը յատկաց նէին այնպիսի մի հաստատութեան, ինչ պիսին է ամբողջ Կովկասում եղած հայոց ազգային հիւանդանոցը:

Ի՞նչն էր ստիպում ընդհանուր ժողովին այդ հարցը մի անգամից փակել, և ի՞նչ էր կորցնում, եթէ յանձնաժողովի ձեռքով ու սումնասիրվէր ու քննադատվէր:

Սակայն այս ամենից ևս եզրակացնում եմ, որ առաջարկս անհետևանք թողնվե լը ոչ թէ նիւթական միջոցների պակասու թեան պատճառով էր, այլ այն հանգամանքի որ այդպիսի մի նշանաւոր առաջարկութեան նախաձեռնութիւնը իմ նուաստիս կողմից էր արված, և ոչ մի որևէ «տիտղոսաւորից» որ այլ կերպ մեկնվէր, ներկայացվէր ու կազադրվէր:

Ապա թէ ոչ՝ ինչի՞ն վերագրել ուսուցիչ ների ապահովութեան համար ֆօնդ կազ մելու առաջարկը, երբ առաջիկայ յոբելեա նի առիթով կայացած խորհրդակցական ժո ղովում առաջարկում էին յանձնաժողով ընտրել: Եթէ հիւանդանոցի համար դժուար է միջոցներ գտնել, ապա երբ պէտք է այն քան գումար հաւաքվի, որ հայ ուսուց ցիչները ապահովվեն: Մինչդեռ հաստատ կարելի է ասել, որ հիւանդանոցի համար աւելի շուտով ու աւելի շատ թւով կը գտ նվէին բարեգործներ, քան յիշեալ ֆօնդի հա մար. որովհետև պահանջը ընդհանուր է, ցաւը սաստիկ և վիշտը անտանելի:

Թէև, ինչպէս վերև ևս յիշեցինք, առա ջարկս մնաց անհետևանք, բայց և այնպէ ես լիայոյս եմ, որ Ընկ. բոլոր անդամները վերջը խոստովանելու են իրանց սխալը ամբողջ հայութիւնը զգալու է Թիֆլիսում առանձին ազգային հիւանդանոց ունենալու անհրաժեշտութիւնը, որովհետև եթէ բազմաթիւ աղեխարշ տեսարանները առա սրտակիցների օգնութեան, այլ հէնց եթէ մէջ բերելու լինենք միմիայն լեզու չիմանալու պատճառով ցաւով տառապող հիւանդի ան կարող բացատրութիւնը, որին գուցէ շատերը ականատես եղած լինեն, բաւական է, որ ա մեն մինը մեզանից զգայ այդ անտանելի դրութիւնը և այդ մասին հոգ տանի դեղ ու դարման գտնելու:

Կրկնում եմ, առողջներին ամեն մարդ էլ կը մօտենայ, ուսուցիչներին ու ուսումնա րաններին օգնողներ շատ կը գտնվեն, մինչ դեռ հիւանդներին, մանաւանդ տարափոխիկ հիւանդութեամբ տառապողներին ոչ թէ կը մօտենան ու կօգնեն, այլ դեռ կաշխատեն անմիջապէս նրանցից հեռու փախչել:

Եւ եթէ այս անգամ այս առաջարկս ըն դունվի և հէնց թէկուզ մի անուանական յանձնաժողով ընտրվի ու գոյութիւն ունե նալով կոչ անի, այն ժամանակ կը գտնվեն շատերը, որոնք միմիայն խորհուրդներ տալով չեն բաւականանայ (ինչպէս այս տողերիս գրողը, որ այժմս շատ միջոցների մասին լռում է), այլ հաստատապէս համոզված եմ, որ ամեն կողմից նիւթական միջոցներ կը տեղան, նոր կտակող բարեգործներ կը յայտնվեն, յաճախ կը դիմեն այդ յանձնաժողովին խորհրդակցելու ու կարգադրելու իրանց կտակն ու կամքը։ Ահա թէ ինչպիսի՝ ինքնաբերաբար, աննկատելի կերպով այդ յանձնաժողովը այդ մարդասիրական հաստատութեան ունենալուն կաջակցէր և ապագայ ազգային առանձին հիւանդանոցի հիմնարկութեան հիմքը կը դնէր։

---

*) Այժմս մօտաւորապէս 130,000-ի է հասնում այդ թիւը:

Վերոյիշեալներն աչքի առաջ ունենալով և այդ գործը գլուխ բերելը այժմս ամենայարմար ժամանակը համարելով—մանաւանդ որ Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերութեան հիմնադիրը եղել է 40 տարուց աւելի հիւանդներին խնամող մեր համակրելի բժշկապետ Բագրատ Նաւասարդեանը—ցանկալի էր, որ այդ պատկառելի Ընկերութեան 30-ամեայ գործունէութիւնը յաւերժացվէր հիւանդներին բժշկող մի հաստատութիւն հիմնելով։ Այդպիսով հէնց ինքը այդ Ընկերութեան հիմնադիրը իր կենդանութեան ժամանակ հոգով մխիթարվելով ու իր աչքով տեսնելով իր նախաձեռնած գործի բարգաւաճումն, իր ունեցած երկարամեայ փորձով ու տածած անսահման սիրով, մենք հաւատացած ենք, կը նպաստէր, որ այդ հաստատութիւնը արժանի բարձրութեան վրա կանգնեցվի ու պահպանվի։ Այսպիսով մենք ոչ թէ միայն յաւերժացրած կը լինենք մի բարի յիշատակ, կամ արտայայտած կը լինենք ի պատիւ հիմնադրի մեր յարգանքն ու հաւատքը, այլ նաև կատարած մեր երախտագիտական սրբազան պարտականութիւնը դէպի հասարակական օրինակելի ու ինքնազոհ գործիչը։

Մակ. Ջմշկ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանքը Ցարսկ.-Կօլօդցիում

Ցարսկիէ Կոլօդցի, 22 ապրիլ

Վերջապէս այստեղի հայ հասարակութեան համար լուծվեց քահանայական հարցը։ Ապրիլի 17-ին, Էջմիածնի սինօդի հրամանի համաձայն, առաջնորդի փոխանորդ Եփրեմ եպիսկոպոսը քահանայ ձեռնադրեց Թիֆլիսում մեր ծխական դպրոցի ուսուցիչ Ցակոբ Գրիգորեանին։ Նորընծան վերադարձաւ այստեղ և կատարում է քառասունքը։

Ինչպէս հաղորդել էինք, տեղիս և հարևան գիւղերի (մօտ 100 տուն) ժողովուրդը 7 տարի մնացել էր առանց սեփական քահանայի, որի պատճառով կրօնական զգացմունքները սառել են վրացական հայ գիւղացիների մէջ, որոնք միայն կրօնով են հայ։ Շնորհակալութեան արժանի է այս գործի նախաձեռնող մեր գործակալ Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեան, որի յորդորներով և աշխատութեամբ այսօր ժողովուրդն ունեցաւ քահանայ և ուսումնարան։

Ցուրտ ձմեռն այստեղ ևս ունեցաւ իր ազդեցութիւնը։ Ծառերը մեզ մօտ նոր սկսել են ծաղկել։

Նորերս հաղորդել էինք, որ մեր հայ հասարակութիւնը խնդիր ուղարկեց երկրագործութեան և պետական կալուածների Թիֆլիսի վարչութեան, խնդրելով 3 դեսատին հող ձրի յատկացնել տեղիս հայոց դպրոցին՝ թթենիների պլանտացիա տնկելու համար։ Այդ վարչութիւնից ստացվեց պատասխան, որ օրէնքով այդպիսի խնդիրը պէտք է յարուցվի հոգևոր իշխանութեան միջոցով, ուստի հասարակութիւնը խնդիր է ուղարկում Էջմիածին տեղակալին։

Այստեղ հիմնվելիք բանկի համար Թիֆլիսի պետական բանկը վճռել է տալ 1000 ր. հիմնական դրամագլուխ և 3,000 ր. կրէդիտ։ Գործը Պետերբուրգումն է և այս օրերս սպասում են թոյլտուութեան։ N. N.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 27 ապրիլ

Նախագահում է իշխան Վօլկօնսկին։

Ալէքսէևը զեկուցանում է ժողովրդական դպրոցների տեսուչների և վերատեսուչների ռոճիկը և նրանց դիւանատան ծախսերն աւելացնելու օրինագիծը։

Վօրօնկօվը գտնում է, որ խմբագրական յանձնաժողովի կատարած յաւելումները օրինագծի մէջ ոչ թէ Դումայի քննութեան առարկայ եղած նիւթերի վրա են հիմնված, այլ Դումայի մասնաւոր անդամների մասնակի կարծիքի վրա, և առաջարկում է պահպանել օրինագծի Դումայից ընդունված խմբագրութիւնը։ Դուման որոշեց վերադարձնել օրինագիծը խմբագրական մասնաժողովին։

Երրորդ ընթերցանութիւնից յետոյ ընդունվում է տղամարդկանց և կանանց ժառանգական իրաւունքներն հաւասարեցնելու օրինագիծը։

Իշխան Գօլիցինը, զեկուցանելով խոլերայի և ժանտախտի դէմ մաքառելու համար չորս միլիոն րուբլի յատկացնելու օրինագիծը, մատնանշում է, որ դեռ դեկտեմբերին Դուման դիմել է կառավարութեանը և հարց տուել այն միջոցների մասին, որոնցով պէտք է կռիւ մղվի վերոյիշեալ պատուհասների դէմ։ Կառավարութիւնը արձագանք տուաւ, հրաւիրելով հակախոլերային համաժողով, որը բազմակողմանի քննութեան ենթարկեց համաժողովի խնդիրը։ Պարզվեց, որ համայնական հաստատութիւնները չափազանց մեծ ծախսեր են արել համաճարակի դէմ մղած կռւում, որ համաճարակի բնատեղ են հանդիսանում այն վայրերը, որտեղ բացակայում են հասարակական կազմակերպութիւնները։ Հասարակական օրգանների գործունէութեան պետական նշանակութիւնը հաստատված ու ճանաչված է, հետևապէս պէտք է դրամապէս նպաստել այդպիսի գործունէութեան։ Բիւջէտային մասնաժողովը մի քանի փոփոխութիւններ է մտցրել կառավարչական օրինագծի մէջ, առաջարկելով փոխարինական նպաստների տեղ՝ տալ քաղաքներին և զեմստվօներին անդարձ օժանդակութիւն։ Բացի դրանից մասնաժողովը կարծում է, որ կառավարչական անկախ գործունէութեան համար՝ երկու միլիոնի փոխարէն բաւական է տալ 1.500,000 րուբլի, և 2.500,000 րուբլի գումարը յատկացնել զեմստվային ու քաղաքային հաստատութիւններին օժանդակութիւններ տալու համար։

Սօլտուզը ցոյց է տալիս, որ քաղաքներն համաճարակ տարածելու համար մեծ դեր են կատարում, և առաջարկում է, որ ջրաբաշխութեան բարւոքման, ժամանակաւոր բուժարանների և բժշկական կենտրոնների և ճաշարանների համար օժանդակութիւն տրվի ոչ միայն զեմստվօներին, այլ և քաղաքներին, բացի մայրաքաղաքներից։

Սինադինօն պաշտպանում է Սօլտուզի առաջարկը։

Մանկօվը ցանկութիւն է յայտնում, որ ուսուրեական և պրիամուրեան արտօնեալ կօզակները, որոնք կոչված են պաշտպանելու չինական սահմանները և արգելելու ժանտախտի մուտքը, առանձին վարձատրութիւն ստանան այդ պաշտօնավարութեան համար։

Փօղնևը, քննադատելով կառավարութեան համաճարակների դէմ մաքառելու գործունէութիւնը, կարծում է, որ ժանտախտն ու խոլերան չէ կարելի արմատահանել միայն ոստիկանական միջոցներով։ Հարկաւոր է ամբողջ սանիտարական գործի վերակազմութիւն, որը պէտք է կատարվի որոշակի։

Շիլօն պաշտպանում է պրիամուրեան գեներալ-նահանգապետի ընդունած այն ձևը, որ նա արճճէ նշան է դնում չինացիների վրա, որովհետև այլապէս անկարելի է որոշել, թէ ով է անցել հսկողութեան շրջանը։ Համաճարակների դէմ մաքառելու ամենաարմատական միջոցն է գիւղացիներին հող տալը, որովհետև երբ մարդիկ քաղցած չեն լինի, չի լինի նաև ժանտախտ ու խոլերան։

Չիլիկինը համաձայնում է Շիլօյին՝ չինացիներին արճճէ նշան կախելու խնդրում։

Շինգարեօվը քննադատում է համաճարակների դէմ մաքառելու կառավարութեան ձեռնարկած միջոցները և ցանկութիւն է յայտնում, որ նա շուտ ձեռնարկի առողջապահիկ բոլոր օրինագծերի վերաքննութեան։

Զեկուցանող Գօլիցինը պաշտպանում է մասնաժողովի խմբագրութիւնը. Սօլտուզի խմբագրութեան հակառակ կարծիք է յայտնում և ցոյց է տալիս, որ գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն՝ քաղաքները պարտաւոր են կատարել սանիտարական որոշումների ամբողջ շարքը։

Օրինագիծն ընդունվում է Սօլտուզի սրբագրութեամբ։

Ստօլիպինի ճառը Պետ. Դումայում

Նիստի վերաբացումից յետոյ նախագահում է Րօդզեանկօն։ Դահլիճումն է համարեա Դումայի ամբողջ կազմը։ Պատգամաւորական բոլոր բազկաթոռները բռնված են. լօժաները լիքն են հասարակութեամբ։ Մինիստրների և սենատօրների բազկաթոռներն անխտիր բռնված են։ Մինիստրական օթեակումն է մինիստրական համարեա ամբողջ կազմը։ Նիստը բացվելուց յետոյ մինիստր-նախագահը բարձրանում է ամբիոն և բացատրութիւն տալիս արևմտեան զեմստվային օրէնքն Հիմնական կանոնների 87-րդ յօդուածի հիման վրա անցկացնելու առիթով։

Դումայի պարոնայք անդամներ։ Այն ժամանակամիջոցը, որ անցաւ Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածի՝ կառավարութեան ձեռքով անկանոն գործադրութեան մասին Պետական Դումա մտցված հարցապնդման օրից, ամրապնդեց շրջող կարծիքը դրա պատճառների մասին, որոնք դրդեցին կառավարութեանը անել այդ գործը, և շատերի աչքում դա դարձաւ բոլորովին անվիճելի։

Իմ նպատակն է հակադրել այդ կարծիքներին և բոլորովին անկեղծ կերպով բացատրել ամբողջ ընթացքը ձեզ վրդովեցրած գործի և հնար եղածին չափ տալ լիակատար ու ճշգրիտ բացատրութիւն դրդապատճառների, որոնք ստիպեցին կառավարութեանը դիմել ներկայ դէպքում անսպասելի և արտակարգ միջոցի։ Հասկանալի է, որ իմ ճառը, ինչ տեսական պատմական բնոյթ էլ որ նա կրէ, այնուամենայնիւ զանազան քաղաքական շրջաններում գոյացած կարծիքների պատճառով, որ վերաբերում է կառավարութեան քաղաքականութեանը, որոշ անբարեացակամութեամբ կընդունվի իմ ունկնդիրների կողմից։

Սա առաջին և մեծ դժուարութիւնն է, որը ես հաշւի պիտի առնեմ իմ բացատրութիւնների ընթացքում, բայց նա միակը չէ։

Ինձ համար երկրորդ աննպաստ հանգամանքն այն է, որ ես բացատրութիւն եմ տալիս Դումային նրանից յետոյ, երբ ես բացատրութիւն տուի Պետական Խորհրդին, որը այնպիսի մի կազմ է, որը շահագրգռված է աւելի ես այդ գործում. և որովհետև կառավարութեան փաստերը որոշ չափով սպառվել են, ուստի և ես ստիպված կը լինեմ որոշ կրկնութիւններ անել, թէև ես կը կրկնեմ միայն այն, որը կարելի է կրկնել նպատակայարմար կերպով։ Այս կրկնութիւնները կը վերաբերեն գործի միայն ձևական կողմին, թէև դրա ներքոյ պաշտպանվել չեմ կամենում, բայց զանց առնել խնդրի այդ կողմը ես չեմ կարող, որովհետև յետագայ բացատրութիւնների ընթացքում, ես ստիպված կը լինեմ յենվել դրանց վրա, որպէս կատարված փաստերի, որ ներկայ դէպքում այլ անխուսափելի պայմանների ներքոյ՝ չէ եղել կառավարութեան կողմից ոչ օրէնքի խախտումն և ոչ էլ զանցառութիւն։

Սա անհրաժեշտ է ինձ համար և խնդրի աւելի պարզ բացատրութեան համար, որ վերաբերում է 87-րդ յօդուածին, որի դերն է որոշել Գահի իրաւունքները և չէ կարող նսեմացվել չը ստեղծելով անցանկալի միջադէպ։

Ի՞նչ տեսակի ձևական իրաւունքներ են յատուկ մեր օրէնսդիր հիմնարկութիւններին։

Ինչպէս Դուման, այնպէս և Խորհուրդը, անկասկած, իրաւունք ունեն կառավարութեանը ներկայացնելու հարցապնդումներ կառավարութեան իրերին վերաբերող, բայց միանգամայն կասկածելի է, որ այս հիմնարկութիւնները իրաւունք ունենան հարցապնդումներ անել կառավարութեանը այնպիսի խնդիրների նկատմամբ, որոնք էութեամբ օրէնսդրական են, եթէ նոյն իսկ օրէնսդրական ֆունկցիաները ժամանակաւորապէս իրականանային մինիստրների խորհրդի միջոցով։

Այս կողմից մեր պալատների իրաւունքները հիմնաւորապէս և պարզ պատկերացված են օրէնքի մէջ։ Նրանք կայանում են վերջինիս քննադատութեան իրաւունքի մէջ, որը վերաբերում է ժամանակաւոր օրէնքներին և նրանց հետևող սանկցիային։ Բոլոր հակաճառութիւնները այս առիթով՝ իմ կարծիքով՝ հիմնված են երկու կարծիքների և բօլէների իրար շփոթելու մէջ։ Պալատների իրաւունքները նրանից յետոյ, երբ արդէն օրէնքը մտցված է օրէնսդիր հաստատութիւնների մէջ և պալատի այն իրաւունքներին, որոնցով վերահսկողութիւն է սահմանվում կառավարութեան ակտի օրինաչափութեան վրա մինչ այդ։ Առաջին իրաւունքն է մերժել օրէնքը ամեն տեսակ պատճառաբանութիւններով և նոյնիսկ առանց որևէ վիճաբանութեան, իսկ երկրորդ իրաւունքը առհասարակ գոյութիւն չունի։ Նրանք են որոշում օրէնսդիր պալատների իրաւունքները, որոնք չեն կարող ցէնզօր լինել բարձրագոյն իշխանութեան ձևական օրինականութեան ակտի։ Ինձ յայտնի են արևմտեան պետութիւնների պրակտիկայից դէպքեր, երբ մերժվում են ժամանակաւոր օրէնքները, որոնք անց են կացվում արտակարգ կերպով. բայց ինձ յայտնի չեն հարցապնդումների դէպքեր այնպիսի ակտերի անօրինաչափութեան մասին, որովհետև սուբյեկտիվ գնահատութիւնը, բօլէի արտակարգութիւնը և նպատակայարմարութիւնը յամենայն դէպս պալատին չեն պատկանում։ Սա տրամաբանական և հասկանալի է. օրէնսդիր մարմինները չեն կարող դատաւոր լինել մի այլ հիմնարկութեան օրէնսդիր ակտի օրինաչափութեան վրա։ Այս պարտականութիւնը մեր օրէնքների համաձայն վերապահված է միայն կառավարիչ սենատին, որը իրաւունք չունի յայտարարել անօրինական և անօրինաչափ ակտ։

Միևնոյն կերպ օրէնսդրական հիմնարկութիւնները իրաւունք ունեն հարցապնդում անել մինիստրների խորհրդի նախագահին, առանձին մինիստրներին և գլխաւոր կառավարիչներին՝ նրանց հակաօրինական գործողութիւնների նկատմամբ, սակայն հազիւ թէ նրանք իրաւունք ունենան հարցապնդել նոյն բանի մասին մինիստրների խորհրդին, որպէս մի հիմնարկութեան, որը չէ ենթարկվում կառավարիչ սենատին, որի մէջ նախագահում է Նորին Կայսերական Մեծութիւնը, երբ Նրան հաճելի է։ Մի անգամ միայն, երբ ինձ ներկայացված էր հարցապնդում՝ մինիստրների խորհրդի հակաօրինական գործողութիւնների նկատմամբ, որպէս մի հաստատութեան, այն է 1909-ի օգոստոսի 24-ին հրատարակված կանոնների վերաբերող, ես առարկել էի, թէ այդ հարցապնդման էութիւնը չէ համապատասխանում հարցապնդական իրաւունքի բնութեանը։

Դումայի կողմից ներկայացված ներկայ հարցապնդումը կազմված է աւելի զգոյշ կերպով՝ ձևական տեսակէտից, քան Պետական Խորհրդի հարցապնդումն էր, որովհետև նրա մէջ բացակայում է մի առարկութիւն, որը ծառայում էր իբրև հիմք Խորհրդի հարցապնդման։ Բայց այդ առարկութեան մասին խօսեցին մի քանի հռետորներ՝ հարցապնդումը ընդունելուն վերաբերող վիճաբանութիւնների ժամանակ, ուստի և ես ստիպված եմ մի քանի խօսքերով շօշափել այդ մասին։ Ես հասկանում եմ այդտեղ բարձրագոյն իշխանութեան իրաւունքի արտաւորումը՝ մինչև օրէնսդրական մարմինների արձակումը, առաջացած արտակարգ այն հանգամանքների շնորհիւ, երբ կարևոր է 87-դ յօդուածի գործադրութիւնը։ Սակայն այդ իրաւունքը անհերքելի է։ Նա հիմնված է և ամրապնդված կեանքի պայմանների վրա, և որքան էլ մեր օրէնսդրական պայմանները տարբերվելիս լինեն արևմտեան պետութիւններից, այնու ամենայնիւ այնտեղ ևս՝ Արևմուտքում այդ իրաւունքը հասկացվում է միևնոյն կերպ, և գիտութեան հեղինակաւոր կարծիքը ընդունում է այդ իրաւունքին դիմելու հարցի կանոնաւոր լինելը՝ հէնց օրէնսդրական հիմնարկութիւնների պարապմունքների ընդհատման միջոցին, երբ դա առաջ է եկել նոյն հիմնարկութիւնների գործողութիւնների շնորհիւ։ Ուրիշ և ոչ մի բացատրութիւն այդ իրաւունքի՝ ընդունելի չէ. դա աղաւաղած կը լինէր օրէնքի միտքն ու իմաստը, դա Միապետի իրաւունքը՝ արտակարգ ուկազների գործադրութեան մէջ՝ ոչնչացրած կը լինէր։

Հարցապնդման ձևական մասի հետ մեր հաշիւը վերջացնելու համար, ես կը շօշափեմ նաև ուկազնոյ իրաւունքի մասին, որպէս սոսկ քաղաքական իրաւունքի, որ Արևմտեան Եւրոպայում իսկ գոյութիւն չունեն այդ գործադրութեան համար այսպէս ասած սահմանադրական նորմեր։ Եթէ դուք չէք ցանկանում դիմել աւստրիական օրինակին, այդ դէպքում վերցրէք Պրուսիայի օրինակը. բոլոր արտակարգ ուկազները, որոնք հրատարակված են վերջին 50-ամեակում՝ պրուսական սահմանադրութեան 63-դ յօդուածի կարգով ենթարկված են քննադատութեան պրուսական պալատների կողմից, թէպէտ ի վերջոյ նրանց մեծ մասը պալատների կողմից ընդունված էր, բայց շատերն էլ դրանցից յարուցին մեծ կասկած, ինչպէս, օրինակ, բնական տուրքերին վերաբերվող, նոր հարկատուութեան, մաքսային հարկերին և այլն։

Այն, ինչ որ մեզանում փորձում են ներկայացնել օրէնքի խախտմամբ, հակաօրինականութեամբ՝ թէ Պրուսիայում և թէ Աւստրիայում երբէք սահմանադրութեան խախտումն չէ համարվել։

Բայց եթէ այս գործի ձևական կողմը այնքան անզարտ է, ապա ուրեմն ինչո՞վ բացատրել, պարոններ, այն աղմուկը, որը բարձրացած էր կառավարութեան վերջին գործողութիւնների շուրջը, քաղաքական շրջանների գրգռումը, ոմանց զայրոյթը, միւսների տարակուսանքը։ Անշուշտ, միամտութիւն կը լինէր կառավարութեան կողմից բացատրել այդ ամենը՝ նրան որևէ տհաճութիւն պատճառելու դիտումով։ Անկասկած, պատճառները աւելի խորն են թաղնված։ Որպէսզի հարցը հիմնովին սպառված համարվի, պէտք է դիմել կրկին նրանց. և ես կը փորձեմ այդ անել միանգամայն հանգիստ և անաչառ կերպով։ Բայց ի նկատի ունենալով իմ հէնց այս բօլէիս արտայայտած մտքերը՝ ես իմ առաջիկայ բացատրութիւնների մէջ կը հիմնվեմ ոչ թէ Դումայի կանոնադրութեան 58-դ յօդուածի վրա, այլ 40-րդի վրա, և շատ հասարակ ու բարեխիղճ կերպով, որքան դա ինձ մատչելի կը լինի, կը տեղեկացնեմ գործի մասին, որը համաձայն 40-րդ յօդուածի պիտի ենթակայ լինի ձեր քննութեանը։ Ես այդ բանը համարում եմ անհրաժեշտ, որովհետև Դուման դատաստանական հիմնարկութիւն չէ՝ արդէն կատարված փաստին վճիռ տալու. Դուման գործ ունի տեղի ունեցող դէպքերի հետ, երկրի կեանքի հետ, իսկ կեանքի երևոյթները պահանջում են բացատրութիւններ։

Ես պէտք է ընդգծեմ, ցաւակցաբար, այն պունկտերը և կէտերը, որոնք տարաձայնութիւն են մտցնում Դումայի հարցապնդման հիմունքների և կառավարութեան հայեացքի միջև։ Բայց նախ քան այդ անելը, ես անցողակի կը յիշատակեմ մի հանգամանք, որը տարաձայնութեան տեղիք չի տայ մեր մէջ։

Կառավարութիւնը, ինչպէս և Դուման, ըմբռնում է և ընդունում է, որ 87-րդ յօդուածը կարելի է գործադրել միայն բացառիկ դէպքում և որ նա չէ կարող նրան գործածել իբրև սովորական մի զէնք գործողութիւնների համար։

Ամեն մի կառավարութիւն պէտք է նախատեսի գալիք պատահարները և նրանց համեմատ կարգադրի իր գործողութիւնները։ «Կառավարել՝ կը նշանակէ նախատեսել» —ասում էր դեռ Եկատերինէ Մեծը, և անկասկած կառավարութիւնը, որ անօդային մի տարածութեան մէջ չէ գործում, պէտք է գիտենար, որ կը գայ ժամ, երբ նա ընդհարում կունենայ երկու հոգևոր աշխարհների՝ Դումայի և Խորհրդի հետ։ Բայց՝ որովհետև այդ երկու հոգևոր աշխարհները բոլորովին տարբեր են միմեանցից, ուստի կան ասողներ, որ կառավարութիւնը պէտք է համակերպվելու ընթացք բռնի՝ փոխադարձօրէն հաշտեցնելու համար եկող սրութիւնները։

Խորհրդի հոգեբանութիւնը դժուար չէր նախագուշակել։ Խորհուրդը ցանկացել էր տեղի ունեցող եղելութեան մէջ տեսնել միայն մի մաքառում կառավարութեան կողմից ի վնաս օրէնսդրական մարմնի։ Դումայի հոգեբանութիւնը աւելի բարդ է, որովհետև նա վերագրում է կառավարութեանը ուրիշ աւելի վատ բան։

Ես, ի հարկէ, չեմ շօշափի այն յարձակումները, որոնք ուղղված էին անձնապէս իմ դէմ։ Աւելի վատն այն է, որ կասկածի է ենթարկված կառավարութեան շարժառիթը։ Իբր թէ կառավարութիւնը ցանկանում է կառավարել երկիրը իր բարեհաճութեան, իր կամքի համեմատ (ձայն ձախից՝ «ճիշդ է») և փորձել է զինակցութեան հրաւիրել Դումային (ձայն ձախից՝ «ուղիղ է», ձայն աջից՝ «կամաց»)։ Եւ որովհետև օրէնքը հրատարակված էր Դումայի խմբագրութեամբ, ուստի դրա վրա նայում էին իբրև մի փորձութեան վրա, որով պէտք է Դուման կաշառվէր և Խորհրդի հետ կռւի բռնվէր, իսկ յետոյ վարկաբեկ լինէր, վերականգնելով վարչական բռնութեան օրերը (աղմուկ ձախում, նախագահի զանգահարութիւն)։ Բացի դրանից, միջանկեալ նկատողութիւնների մէջ աչքի է ընկնում մի յանդիմանութիւն, որ 87-րդ յօդուածը խեղաթիւրված է արհեստական ընդհարում առաջացնելով և որ կառավարութիւնը խախտել է ընտրական օրէնքը։

Այս էին մօտաւորապէս մտածում, զգում և արտայայտում Դումայի հարցապնդման հեղինակները։ Ես, ի հարկէ, դեռ կանգ եմ առնելու այդ մտքերի վրա, սակայն ես նախ կը փորձեմ վերացնել մի անհիմն մեղադրանք, որ վերաբերում է ընտրողական օրէնքը խախտելուն։ Ես կարծում եմ, պարոններ, որ այդտեղ ինչ-որ թիւրիմացութիւն կայ։ Մարտի 14-ի ուկազը ոչ մի խօսքով չէ յիշատակում այդ հարցը։ Ընդհակառակն, եթէ ուկազի մէջ ծանօթութիւն լինէր ընտրութիւնների նախկին կարգը պահպանելու մասին, հէնց դրանով էլ փոփոխված կը լինէին Պետական Խորհրդի ընտրութիւնների կանոնները և խախտված կը լինէր Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածը։ Ի հարկէ, Ռուսաստանի հարաւային նահանգներում զեմստվօ մտցնելով՝ ինքնին ոչնչանում է այդ կանոնների 5-րդ յօդուածը, բայց ոչ թէ մարտի 14-ի ուկազն է յաղթահարում այդ յօդուածը, այլ նա ինքն իրան որոշում է իբրև ժամանակաւոր որոշ հանգամանքների գոյութիւնից վերացման արժանի մի միջոց։ Ինքնըստինքեան պարզ է, որ Խորհրդի այժմեան անդամների լիազօրութիւնները կը մնան իրանց ոյժի մէջ նաև զեմստվօ մտցնելուց յետոյ, իսկ այդ ժամանակամիջոցում հաւանօրէն կը պարզվի ու վերջնականապէս կորոշվի, այն ժամանակաւոր միջոցի վիճակը, որ գործադրվեց 87-րդ յօդուածի կարգով։ Ես այժմ դիմում եմ հիմնական հարցին։

Դումայի պարոնայք անդամների դատողութիւններից պարզ է, որ հարցի արմատը, այսինքն արևմտեան զեմստվօյի օրինագծի մերժումը մինչև այժմ չէ քննվել Դումայում իբրև ինչ-որ անսովոր, իբրև արտակարգ հանգամանք։ Եթէ որևէ արտակարգ բան տեսնվեց վերջին դէպքերի մէջ, այդ եղաւ բացառապէս կառավարութեան արտաքին, սոսկ աչքի ընկնող գործողութեան մէջ, այսինքն եղանակի և ոչ թէ պատճառի մէջ։ Արտակարգ հանգամանքը նկատվեց ոչ հարցի էութեան մէջ, այլ լոկ 87-րդ յօդուածի գործադրութեան մէջ։ Իսկ կառավարութիւնը իր կողմից հարցի արմատը տեսաւ քաղաքական բօլէի բացառիկութեան մէջ և 87-րդ յօդուածը հասկացաւ սոսկ իբրև բոլորովին բացառիկ միջոց, իբրև անխուսափելի դրութիւնից ելնելու մի օրինական եղանակ։ Որպէսզի կարելի լինի հասկանալ կառավարութեան գործողութիւնները և դրդապատճառները, հարկաւոր է առաջնորդվել այն տեսակէտով, թէ քաղաքական հանգամանքները բարդվեցին ոչ այնքան սովորական կարգով. Յիշեցէք, պարոններ, պետական գործերի դրութիւնը մինչև մարտ ամսի դէպքերը։ Ամենքին յայտնի է, ամենքը յիշում են մեր օրէնսդրական սովորութիւնը՝ Դումային օրինագծեր ներկայացնելը, այստեղ նրանց ոչ լիովին արմատական ընդունվելը, Խորհրդին յանձնելը Խորհրդի մէջ կառավարական օրինագծերը ճանաչվում են արդէն չափազանց արմատական, մերժվում են նրանք և օրէնքը խախտվում է, իսկ վերջ ի վերջոյ հետևանքում թաղւում է այսպէս կոչված վէրմիշէլը, կանգ են առնում բոլոր սկզբունքային բարենորոգումները։ Նկատեցէք, պարոններ, որ ես ոչ մի քաղաքական կուսակցութեան չեմ մեղադրում աւելորդ բազմակարծի և աւելորդ ռէակցիօնականութեան մէջ։ Ես դրութիւնը նկարագրում եմ իր իրողութեամբ։ Ես յոկ կամենում եմ ճշդութեամբ պատկերացնել այն անսովոր պայմանները, որոնց մէջ ստիպված էր գործել կառավարութիւնը, որոնց մէջ ծագեց և իր յետագայ զարգացումն ստացաւ հարաւային զեմստվօյի օրէնքը։

Միանգամայն համոզվելով երկու պալատների անպայման իրաւունքին՝ փոփոխել և մերժել նրանց առաջարկվող օրինագծերը, կառավարութիւնը բայց և այնպէս պէտք է իրան հաշիւ տայ, թէ լինում են արդեօք այնպիսի բացառիկ բօլէներ, երբ հէնց ինքը կառավարութիւնը պէտք է հանդէս գայ կռւելու առ վայր մի իր քաղաքական իդէալների համար։ Կառավարութիւնը պէտք է վճռէր, թէ արժանապատւութիւն է, յիրաւի, իրան շղթայակապ կօրբէկը և մեքենայաբար շրջեցնել կառավարական անիւը, պատրաստելով այնպիսի նախագծեր, որոնք երբէք չը պէտք է հանդէս գան, կամ թէ կառավարութիւնը, որ հանդիսանում է գերագոյն իշխանութեան կատարողը և արտայայտողը, իրաւունք ունի և պարտաւոր է վարել որոշակի պարզ քաղաքականութիւն։ Պէտք է, արդեօք, կառավարութիւնը ներկայացուցչական հաստատութիւնների ստեղծագործական կատարելագործման ժամանակ [illegible] թուլանալ կամ ուժեղանալ։ Վերջապէս, իրաւունք ունի՞, արդեօք, կառավարութիւնը Միապետից Թոյլտուութիւն հայցել օգտվելու իր ձեռքի տակ եղող բոլոր օրինական միջոցներից կամ թէ դա համահաւասար է կամայականութեան։ Եւ, ի հարկէ, պարոններ, կառավարութիւնը չէր կարող վճռել այդ հարցը յօգուտ կառավարութեան անզօրութեան։ Դրա պատճառը ոչ թէ կառավարութեան ինքնասիրութիւնն է, այլ պետական հիմունքների կայունութիւնը։ Այդ պատճառով ներկայ գործում, եթէ միայն նրան տրվում է խոշոր նշանակութիւն, կառավարութիւնը պէտք է Գերագոյն Իշխանութեան ներկայացնէր մի օրինական ու խելամիտ ելակէտ։

Ինչպիսի՞ ելք կարող էր լինել, պարոններ, այս բոլորից իմ նկարագրած անելի միջից (ձայներ ձախից՝ «հրաժարական». մի ձայն աջից՝ «հանդարտ»)։ Ի հարկէ, առաջին բնական ու օրինական ելքը կայանում էր արեւմտեան զեմստվօյի օրէնքը օրէնսդրական հաստատութիւններին երկրորդ անգամ ներկայացնելու մէջ։ Շատերն ասում են, որ եթէ կառավարութիւնը երեսը չը թեքէր ժողովրդական ներկայացուցչութիւնից, եթէ նա չը գերադասէր միայնակ մնալ, փոխանակ ձեռք-ձեռքի տուած առաջ ընթանալու Դումայի հետ, այն դէպքում մի փոքր համբերութեան ժամանակ կարելի էր ցանկալի հետեւանքների հասնել առանց ոչ անցանկալի ցնցումների։ Բայց չէ՞ որ, պարոններ, այդ այդպէս չէ. դա կը լինէր ինքնախաբէութեան մի ակտ, եթէ ոչ կեղծաւորութիւն. դա կը լինէր խիստ պատասխան Արեւմտեան Ռուսաստանի առաջ, մանաւանդ որ շուտով լրանալու են ձեր լիազօրութիւնները. և որպէսզի վերջանայ զեմստվօյի հարցը, հարկաւոր է նրան յանձնել մասնաժողովի և մի փոքր ուշացնել նրա քննութիւնը (ձայներ աջից՝ «բրաւօ»)։ Բայց, պարոններ, այդօրինակ դէպքում կար ուրիշ օրինական ձև. դա այն է, որ կարելի էր Կայսրից խնդրել արձակել օրէնսդրական հաստատութիւնները (ձայներ ձախից՝ «ճիշդ է»)։ Բայց պալատների արձակումը վերին պալատի հետ տարաձայնվելու պատճառով, որի կէսը ընտրովի անդամներ են (ծիծաղ, աղմուկ ձախից, նախագահը զանգահարում է), զուրկ կը լինէր գործնական ոյժից և նշանակութիւնից։ Մնում էր երրորդ ելակէտը՝ 87-րդ յօդուածը։

Ես արդէն ասացի, պարոններ, որ կառավարութիւնը պարզօրէն հաշիւ էր տալիս իրան, որ Գերագոյն Իշխանութեան ակտերի օրէնսդրական հաստատութիւնների ձեռքով գնահատութիւնը ներկայացնում է իրանից իրաւաբանական անկարելիութիւն։ Սակայն, հասկանալով հարցը հէնց այդպէս, և գիտենալով որ օրէնսդրական հաստատութիւնները ունեն անհամեմատ ուժեղ միջոց—ժամանակաւոր օրէնքը լրիվ մերժելու իրաւունք, կառավարութիւնը կարող էր այդ քայլն անել միմիայն ամբողջովին հաւատացած, թէ 87-րդ յօդուածի կարգով հրատարակված ակտը ըստ էութեան Դումայի համար ընդունելի է։ Բայց, պարոններ, այն, ինչ որ կատարվեց այժմ աւելի ցայտուն լուսաբանութեամբ, լռելեայն կերպով Դուման ընդունում էր այլ հանգամանքներում։ Ես չեմ խօսի մանր օրէնքների մասին, ես կը յիշեցնեմ ձեզ հնազանդ համայնքների օրինագծի քննութիւնը։ Դուք գիտէք, որ այդ օրէնքի նկատմամբ համաձայնութիւն չը կայացաւ երկու պալատների միջև և որ ներկայումս պահանջվում է միայն վերջնական սանկցիա (պակասում է)։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Դուման կը լսէ այդ տարաձայնութիւնը իր առաջիկայ նիստերից մէկում, լիուլի հաւատով՝ թէ կառավարութիւնը կը միջնորդէ Թագաւոր Կայսրի առաջ վերականգնելու գոյութիւն ունեցող օրէնքը (ձայներ ձախից՝ «ինչ. դա խայտառակութիւն է») 87-րդ յօդուածի կարգով (ծիծաղ, աղմուկ ձախից)։

Բոլորովին հասկանալի էր, որ եթէ Դումայի որոշումը տեղի ունեցած չը լինէր բնական ընդհատումից առաջ, այն ժամանակ կառավարութեան առաջ ամբողջ ոյժով հանդէս կը գար արհեստական ընդհատման անհրաժեշտութիւնը, որովհետև, պարոններ, չէ կարելի վհատեցնել 10 միլիոնից աւելի մարդկանց, ունեցող ռուսական ոգի և արիւն, թէ ինչ է՝ անպատեհութիւններ են առաջացնել պետական մեքենայում (ծափ. աջից, կենտրոնում «բրավօ», շվվոց ձախում, նախագահի զանգահարութիւն)։ Չէ կարելի, պարոններ, տեսական հակառակութիւնների շնորհիւ, ոչնչացնել 1500 ստարօօբրեադների համայնքներ և արգելք լինել, որ նրանք ազատ աղօթեն, ինչպէս Կայսրն է արտօնել (աղմուկ)։ Ի հարկէ 87-րդ յօդուածը ծայրայեղ միջոց է, բացառիկ, բայց նա Միապետին հնարաւորութիւն է տալիս դուրս գալու դժուար կացութիւնից։ Եթէ, օրինակ, սովի ժամանակ օրէնսդրական հիմնարկութիւնները, չը համաձայնվելով Թւերի վերաբերութեամբ, չը կարողանային իրագործել սովեալներին օգնելու օրինագիծ, մի՞թէ կարելի էր ուրիշ կերպ լուծել հարցը, եթէ ոչ գործադրելով ծայրայեղ եղանակը։ Եկատերինէ Մեծի և Ալէքսանդր III-ի օրով գունաւոր կերպով երևաց հաւատ դէպի հայրենին, ռուսականը և միայն Նիկոլայ II-ի Թագաւորութեան օրով հաւատը դէպի ժողովուրդը մարմնացաւ իբրև հրաւէր այդ ժողովրդին որոշելու ազգային գործերի վիճակը. և գուցէ Դումայի քննութեան ներկայացված չէ եղել աւելի լուրջ օրինագիծ, քան արեւմտեան զեմստվօյի խնդիրը։ Այդ օրէնքի մէջ չէ մտցված ոչ-ռուսական ազգութիւնների ճնշման սկզբունք, այլ բնիկ ռուսական ժողովրդի պաշտպանութեան։ Եթէ ուշադրութեան առնենք, որ նոյնիսկ լեհերը լռելեայն հաւանում են, որ նրանք ապահովված են հրէական առանձին կուրիայի շնորհիւ և որ նոյնը կը պահանջեն գերմանացիները էստերի և լատիշների վերաբերութեամբ, կը տեսնենք, թէ որքան համեստ է եղել մեր ծրագիրը՝ ապահովելու ռուս տարրի իրաւունքը արեւմտեան վեց նահանգներում։

Ոչ առանց դողալու, պարոններ, ներկայացրեց կառավարութիւնը առաջին անգամ այդ օրինագիծը Դումային։ Ցաղթեց, ինչպէս դուք գիտէք, պատմական միտքը. սերմանվեցին քաղաքական նոր ռուսական սկզբունքներ։ Եթէ ոչ մենք, գոնէ ապագայ սերունդները տեսնելու են նրանց աճումը։

Բայց ինչ տեղի ունեցաւ դրանից յետոյ։ Մասամբ պատահական սխալմունքով, մասամբ դիտմամբ այդ նոր արշաւանքները սկսեցին անփութութեամբ տնահարվել մարդկանց ձեռքով։ (Ձայներ ձախից՝ «ո՞վ»)։ Բայց ո՞վ էր պաշտպանելու այդ պտուղները։ Ոչ ապաքէն կորչելու է այն ամենը, ինչ որ ստեղծվել է Միապետի և ժողովրդական ներկայացուցչութեան միահամուռ աշխատանքով։ Այստեղ, ինչպէս ամեն հարցում, կային երկու ճանապարհ, երկու ելք. առաջին ճանապարհն է՝ խուսափումն պատասխանատուութիւնից և երկրորդ անգամ Դումային օրինագիծ ներկայացնելը, գիտենալով որ դուք ոչ ոյժ, ոչ միջոց, ոչ իշխանութիւն ունէք առաջ տանել նրան այս պատերից, գործադրել նրան կեանքում, գիտենալով որ դա փայլուն ցոյց է. երկրորդ ճանապարհն է՝ յանձն առնել ամեն պատասխանատուութիւն, բոլոր հարուածները, միայն թէ կարելի լինի փրկել ռուսական քաղաքականութեան հիմքը, մեր հաւատի առարկան (ծափեր աջից, ձայներ՝ «բրաւօ»)։ Առաջին ճանապարհը ուղիղ ճանապարհ է, նրանով ընթանալը հանդիպում է ծափահարութիւնների, սակայն մի ճանապարհ, որ ներկայ դէպքում ոչ մի տեղ չէ հասցնում. երկրորդ ճանապարհը ծանր, փշոտ ճանապարհ է, որի վրայով ընթանալով՝ սուլոցների, ծիծաղների և սպառնալիքների տարափի տակ վերջ ի վերջոյ կայ ելակէտ ընտրված նպատակին հասնելու։

Իշխանութեան գլուխ կանգնած մարդկանց համար չը կայ աւելի մեծ մեղք, քան պարզամտութեամբ խուսափել պատասխանատուութիւնից. և ես բացարձակօրէն խոստովանում եմ, որ առաջարկված էր երկրորդ ճանապարհը, երկրորդ վախճանակէտը։ Ես, այո, պատասխանատու եմ. այդ պատասխանատուութիւնը իմ կեանքի մեծագոյն երջանկութիւնն է (ձայներ աջից՝ «բրաւօ»)։ Եւ ինչ տեսակ էլ որ դուք խիստ դատապարտէք եղածը, ես գիտեմ, ես հաւատում եմ, որ ձեզանից շատերը իրանց սրտի խորքում ընդունում են, որ մարտի 14-ին կատարվեց ոչ թէ ապօրինի բան, այլ ռուսական նորահաստատ ներկայացուցչութեան իրաւունքը ամրացնող մի ակտ։ (Ծափահարութիւն աջից, ձայներ՝ «բրաւօ»։ Ծիծաղ կենտրոնում և ձախում. ձայներ ձախից՝ «ժողովրդական ներկայացուցչութեան պաշտպան»)։ Պետական Դումայի հայրենասիրական խանդավառութիւնը ռուսական զեմստվօ ստեղծելու գործում հասկանալի, գնահատելի դարձաւ Գերագոյն Իշխանութեան հաւանութեամբ (ծափ. աջից, ձայներ «բրաւօ»։ Աղմուկ ձախից)։

Ստոլիպինի ճառից յետոյ Դուման միաձայն որոշում է դիմել անմիջապէս բացատրութիւնների քննութեան։

(Կը շարունակվի)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երէկ, ապրիլ 28-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի II քրէական բաժնում քննվեց Մողնու եկեղեցու քահանայ Վարդան Տէր-Ղևոնդեանի՝ Հ. Առաքելեանի դէմ յարուցած դատը, որով յիշեալ քահանան մեղադրում էր նրան դիֆֆամացիայի մէջ։

Ինչպէս յայտնի է, դիֆֆամացիայի օգնութեան դիմելը դատաստանական այն ձևն է, երբ զանգատվողը չէ կամենում հնարաւորութիւն տալ իրան մեղադրող անձին արդարանալ կամ հաստատել մեղադրանքները վկաների ցուցմունքներով։ Դիֆֆամացիայի ժամանակ մեղադրանքը պէտք է հաստատել միայն դոկումենտներով, գրաւոր, պաշտօնական ապացոյցներով, մի բան, որ յաճախ շատ դժուարին է լինում։

Վարդան քահանայի կողմից մասնաւոր մեղադրողն էր երդ.-հաւ. Սենեքերիմ Արծրունի, պաշտօնական մեղադրողն էր պրոկուրորի օգնական Լեոն Նեանդուլեան, իսկ Հ. Առաքելեանի պաշտպանն էր երդ.-հաւ. Ցովսէփ Ղորղանեան։

Թողնելով գործի մանրամասնութիւնը յաջորդ նիստին, պէտք է ասենք, որ փաստաբան Ս. Արծրունին պահանջում էր, որ Հ. Առաքելեանը ենթարկվի ոչ թէ դրամական տուգանքի, այլ բանտարկութեան։

Հ. Առաքելեան խնդրեց դատարանից պահանջել Թիֆլիսի առաջնորդից և կոնսիստորիայից մի շարք պաշտօնական թղթեր և դոկումենտներ, որոնք պէտք է ապացուցեն, թէ, արդարև, իր բոլոր գրածները Վարդան ք. Տէր-Ղևոնդեանի մասին, որ նա կեղծիքներ է կատարել և խուրացրել է Մողնու եկեղեցու հասանելիք դրամները, ճիշդ են։ Սակայն դատարանը հիմնվելով այն փաստի վրայ, որ Հ. Առաքելեան այդ պահանջը իր ժամանակին չէ արել, այն է՝ գործը քննիչի մօտ եղած ժամանակ, հետևաբար, պաշտօնական մի ձևակերպութիւն չը կատարելու պատճառով, մերժեց։

Դատարանը որոշեց ենթարկել 1039-րդ յօդուածի հիման վրա Հ. Առաքելեանին դրամական տուգանքի (200 ր.)։

Մանրամասնութիւնները վաղը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» ներկայ համարի մի քանի բաժինները սղմվել են, որպէսզի հնարաւոր լինէր մտցնել մինիստր-պրեմիեր Ստոլիպինի ճառը, որն ամբողջապէս զետեղում ենք լրագրի ներկայ համարում։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը որոշել է 100,000 րուբլով գնել 4%-ային պետական ռենտա և իբրև աւանդ դնել Թիֆլիսի համալսարանի խնդրով զբաղվող գլխաւոր կօմիտէտի տրամադրութեան տակ։ Միևնոյն ժամանակ որոշված է նոյն կօմիտէտին Թուղթ տալ այն մասին, որ 5 տարվայ ընթացքում քաղաքը առանց կօմիտէտի համաձայնութեան իրաւունք չունի վաճառել կամ կապալով տալ այն 209 դես. հողաբաժինը, որ յատկացված է ապագայ կրթական հաստատութեան համար։

◆ Վաղը, շաբաթ, ապրիլ 30-ին, երեկոյեան Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ Ալէքսանդր Քալանթար կը կարդայ զեկուցում «Բարձրագոյն դպրոցի մասին Կովկասում»։ Մի առանձին զուգադիպութեամբ՝ նոյն այդ օրը սկսվում են Պետերբուրգում բարձրագոյն դպրոցների հիմնարկութեան մասին յատուկ մի խորհրդակցութեան նիստերը, որտեղ պէտք է քննվի նաև կովկասեան համալսարանի խնդիրը։

◆ Վրաց Պատմա-Ազգագրական Ընկերութիւնը այս օրերս ստացաւ գեներալ Վ. Մազաշվիլիից մի քանի հնութիւններ, որոնց Թւում և հազուագիւտ հին դրամներ, որոնք են՝ հայկական, բիւզանդական, արաբական, պարսկական և վրացական, նաև ռուսական այլ և այլ հարստութիւնների շրջանի։ Դրանց Թւումն է ռուսական մի դրամ 1727 Թւի, որը հատված է Դաղստանի Քօբաչի գիւղում։ Տեղական աւանդութիւնների համաձայն այդ դրամը հատված է Պետրոս I Կայսրի Թոյլտուութեամբ, երբ նա գտնվում էր Դէրբէնտում։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը յանձնարարել է իր անդամ Կօկչայեանին ողջունել քաղաքի կողմից վրաց գրող Գարայեվայի յոբելեանը մայիսի 1-ին և Շիրվանզադէի յոբելեանը մայիսի 21-ին։

◆ 1910 Թւի ընթացքում Ժողովրդական Տանը տրվեցին ընդամենը 199 ներկայացում, որից 68 ռուսերէն, 33 վրացերէն, 32 հայերէն, 26 մալօռոսերէն, 10 հրէաներէն, 10 օպերաներ, 8 Թուրքերէն և 11 զանազան լեզուներով։

◆ Շաբաթ, ապրիլ 30-ին Վրաց Թատրօնում տեղի կունենայ գրական դատավարութիւն։ Դատելու են Ակակի Ծերեթելիի «Նենգն Թամար» պօէմայի հերոսուհի Թամար Թագուհուն, 17-րդ դարու կեանքից։ Պաշտպանելու է Թամարին ինքը հեղինակը, իսկ մեղադրելու է վրաց գրող Իա Էքալաձէն։

◆ Այսօր նշանակված է քաղաքային դումայական տնտեսական մասնաժողովի նիստը, ուր նոր սակագին է որոշվելու մսի և հացի համար։

◆ Ալ. Մելիք-Ազարեանը քաղ. վարչութեանը ներկայացրեց այն նախագիծը, որի համաձայն Վերայի զառիվայրի գլխին, Օլգինսկի փողոցի ուղղութեամբ, Ջէմմէլի դեղատան դիմաց գտնվող տեղի վրա Մելիք-Ազարեան կառուցանելու է եռայարկանի շքեղ շինութիւն մի շարք խանութներով։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը որոշել է Ալէքսանդրեան այգու ներքին մասում հաստատել զինուորական երաժշտախմբի նուագածութիւն շաբաթը 2 անգամ։

◆ Չորեքշաբթի, ապրիլ 27-ին, Թիֆլիսի կանանց բարձրագոյն կուրսերի դահլիճում տեղի ունեցաւ զանազան գիտնական ընկերութիւնների և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների ժողովը՝ ստորագրելու ժողովրդական լուսաւորութեան մինիստրի անունով մի դիմում, Թոյլատրելու բնագէտների համագումար ժողով Թիֆլիսում 1912 Թւի ամառը։

◆ Թոյլատրված է Կովկասի բեմերի վրա ներկայացնել հայերէն «Մարվող տաղանդ» դրաման 3 գործ., հեղ. Արամ Ալչըջեանի, և Գօրդինի «Ովկիանոսից դուրս», Թարգմ. Խաժակի։

◆ Թիֆլիսի Առևտրական Բանկի հանգուցեալ դիրեկտոր Թաւադեանի անունով առևտրական դպրոցում պահվում են երեք սան։

◆ Այսօր տեղի կունենան պտղաբուծութեան և անասնաբուծութեան ընկերութիւնների նիստերը։

◆ Այսօր Ժողովրդական Տանը դիրիժոր Պալիէվի օգտին կը տրվի «Կարմէն» օպերան։

◆ Մադաթեան կղզու տէր Քամոյեանը քաղաքային վարչութեանը տեղեկացրել է, որ կղզին իր բոլոր շինութիւններով պատրաստ է վաճառել քաղաքին 510,000 ր.։

◆ Թիֆլիսի նահանգապետը Թոյլատրել է «Կօպէկ» ընկերութեան նախագահուհի իշխանուհի Իւ. Թումանովային կազմել մայիսի 9-ին զբօսանք Արտիստական Ընկ. ամարային շինութեան մէջ։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Նիկոլայ Խօլեարօն ոստիկանութեան անդամին վիրաւորելու համար ենթարկվում է 100 րուբլի տուգանքի։

◆ Ապրիլ 27-ին, Թիֆլիսում հրատարակվող վրաց «Սախալխո Սաքմէ» Թերթի խմբագրատանը ժանդարմները և ոստիկանութիւնը կատարեցին մանրազնին խուզարկութիւն, որից յետոյ խմբագրատունը կնքվեց։ Վերցվեցին յօդուածները և կալանաւորվեցին խուզարկութեան միջոցին խմբագրատանը գտնվող 12 հոգին։ Պատճառը առ այժմ յայտնի չէ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 ապրիլ

Պատիւ ունեմ յայտնելու ի գիտութիւն Շիրվանզադէի տաղանդը յարգողների, որ Շիրվանզադէի գրական գործունէութեան 30-ամեակի տօնումը՝ յոբելեանական մասնաժողովի պատուաւոր նախագահ Ալէքսանդր Մանթաշեանի մահվան պատճառով՝ յետաձգված է մայիսի 21-ին։

Յոբելեանական մասնաժողովի
փոխ-նախագահ՝ Տ. Ցովհաննիսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բերլինում գոհունակութիւն են յայտնում այն առիթով, որ Պետերբուրգում շքեղ պատրաստութիւններ են տեսնվում գերմանական կրօնպրինցին ընդունելու համար։

◆ Խունխուզներին օգնելու համար արձակված 600 չին զինուորներ կազմել են աւազակախումբ և դիմել են դէպի Մանջուրիա։ Զինուորները զինված են նոր տեսակի զէնքերով և ունեն 2 Թնդանոթ։ Նրանց բռնելու համար ուղարկված է մի զօրամաս։

◆ Չինական զօրքերի աշնանային զինուորական խաղերի ու վարժութիւնների համար կառավարութիւնը յատկացրեց մօտ մի միլիօն րուբլի։

◆ Կանտօնի ապստամբութիւնը կարելի է ճնշված համարել։ Գերի ընկած յեղափոխականներին չինական կառավարութիւնը մտադիր է մահացնել։ Բայց կարծում են, որ հանգստութիւնը երկար չի տևի։

◆ Վաշինգտոնից հեռագրում են Լօնդօն, որ Միացեալ-Նահանգների և Անգլիայի միջև պարտադիր արբիտրաժի պայմանագիրը պատրաստ կը լինի երկու շաբաթվայ ընթացքում։

◆ Վաշինգտոնից հեռագրում են, որ կօնգրէսի նիստում պատգամաւոր Ֆօսը յայտնեց՝ թէ նահանգների միջամտութիւնը մեքսիկական գործերին անխուսափելի է։

◆ Այն տեղեկութիւնը՝ թէ Ֆրանսիան Գերմանիայի պահանջից դրդված այլ ևս զօրքեր չէ ուղարկելու Մեքսիկա, Մադրիդում Թողեց լաւ տպաւորութիւն։

◆ Ցունխսին Պարիզ է գնալու յու նաց Գէորգ Թագաւորը նախագահ Ֆա լիէրի հետ տեսակցվելու համար։ Ա այցելութեանը տալիս են, քաղաքակա նշանակութիւն։

◆ Շամպայն նահանգում տիրում յուզված տրամադրութիւն ժողովներ արգելման պատճառով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12-1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնովսկայա փողոց, № 16.
Տելեֆոն № 40.
(Խ.ու.կ.) 220. 100—18

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բկի,
հիւանդութիւններ,
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինովսկայա փ. № 13, տ. Սէյլ նովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—76

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքայի հիւանդութիւնների։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(օ. մ.) 1179. 100—86

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606»-ո
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33.
(Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33
(չ.ու.կ.) 1134. 100—90

Լոյս տեսաւ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
Նկարներով։ Տղամարդի և կնոջ ծածուկ հիւանդութիւնները, վարակվելուց ազատ մնալու կանոնները և այլն։ Բազմաթիւ խորհուրդներ եւ րեցեպտներ։ Անհրաժեշտ գիրք բոլոր չափահասների համար, մանաւանդ գաւառներում, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Գինն է 50 կոպ.։ Ճանապարհածախսով 65 կոպ.։ Կազմեց մէդիկ. ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ։ Ծախվում է Թիֆլիսում «Պետրոսեան» և «Գուտենբերգ» գրախանութներում և հեղինակի մօտ։ Նաև ծախվում է «Սուսանակ և նրա բժշկութիւնը», նկարներով, խորհուրդներով և րեցեպտներով։ Գինը 20 կոպ., ճանապարհածախս 15 կ.։ Պահանջի մեծութեան պատճառով ապառիկ կամ նալօժով չէ ուղարկվում։ Առաջուց ուղարկել պօստի մարկաներ։ Հասցէն՝ Թիֆլիս, Семеновская № 9. Փոստով պահանջողները գրքի մասին Թող դիմեն առանձին։
(Խ.ու.կ.) 352. 50—8

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1897 թ. 1908 թ. 1888

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Միխայլովսկի պր. № 97, տելեֆոն № 393,

Արհեստանոց, ուր կառքերի անիւներին շրջափակում են շիներ, նոյնպէս և՝ աւտոմօբիլ յին անիւներին (գիդրավլիկ պրէսս՝ շիներով շրջափակելու ապարատ և օմնիբուս աւ տոմօբիլների անիւները)։

Կառքերի շիների ամուր լինելը կախված է նրանց ուղիղ կերպով անիւներին շրջափակելու մէջ, որի համար և արհեստանոցն ունի մասնագէտ-վարպետ

Շիները կառքերի անիւներին շրջափակելը
կատարվում է ձրի։

Շուտով այդտեղ կը բացվի II ՀԱՏԱՎԱՃԱՌ ԲԱԺԱՄՆՈՒՆՔ, նոյնպէս և կատարելագործված գործիքներով սարքաւորված արհեստանոց, ուր նորոգութիւններ կը կատարվեն անխափանիկ աւտոմօբիլային շիների վերաբերմամբ—
(ՎՈՒԼԿԱՆԻԶԱՑԻԱ)
(ու. կ. ս.) 433. 100—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.